ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ

0046. ք.Երևան, Բագրատունյաց 44
հեռ.060 44-34-00 Ֆաքս 44-15-51
E-mail yertrol@rambler.ru

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МЭРИЯ г.ЕРЕВАНА
ЗАО "Электротранспорт Еревана"

0046 г. Ереван, Багратуняц 44
ел: 060 44-34-00 Факс: 44-15-51
E-mail yertrol@rambler.ru

N 357

«06» 09 2013թ.

Ձեր_____

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
ՀԿ-ի իրավաբան պ-ն Գ. Հայրապետյանին

Ի պատասխան Ձեր 22.07.2013թ N 204-ի 9 գրության տրամադրում ենք հետևյալ տեղեկությունները.

1. <<Երևանի էլեկտրատրանսպորտ>> ՓԲԸ-ի կողմից սպասարկվող երթուղիներում աշխատում են ընդամենը թվով 64 վարորդներ: Հաշվի առնելով, որ ըստ ընկերության ներքին կանոնակարգի վարորդները պարտավոր են աշխատել բոլոր երթուղիներում և չկա ստույգ սահմանազատում, ուստի մենք չենք կարող առանձին նշել յուրաքանչյուր երթուղիում աշխատող վարորդների թիվը:
2. <<Երևանի էլեկտրատրանսպորտ>> ՓԲԸ-ի կողմից սպասարկվող երթուղիներից յուրաքանչյուրի վարորդների աշխատավարձի չափը նույնպես չենք կարող նշել, վերոհիշյալ պատճառով:Հարկ եմ համարում նշել, որ ընկերության տրոլեյբուսի վարորդի միջին աշխատավարձը կազմում է 99179 դրամ:
3. Ներկայացնում եմ վարորդների աշխատանքային պայմանագրերի վարձատրությունը սահմանող հատվածը, պայմանագրով նախատեսված է աշխատանքի վարձատրության ձևը սահմանվում է դրամարկղ մուծված հասույթից տոկոսային համամասնությամբ, հաշվարկվում և վճարվում է ամսական մեկ անգամ մինչև հաջորդ ամսվա 15-ը որը նույնն է, բոլոր վարորդների հետ կնքված պայմանագրերում:

Տնօրեն՝ Հ.Երեմյան